

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /գրադմունքի/ անվանումը	0923.02..5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական աշխատող» որակավորում:
I. Դերը	Տարբեր սոցիալական ծառայություններում, կազմակերպություններում /խորհրդառուներին, շահառուներին, ընտանիքներին, խմբերին ու համայնքներին/ սոցիալական ծառայությունների մատուցում
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1.Սոցիալական աշխատանքի՝ որպես մասնագիտական գործունեության տեսական հիմքերի ներկայացում	
Աշխատանքային գործընթացը	1)սոցիալական քաղաքականության մեջ սոցիալական աշխատանքի դրսևորումների զարգացման, ձևավորման ներկայացում, 2)սոցիալական աշխատանքը և՛ որպես տեսություն, և՛ որպես մասնագիտական գործունեություն, 3)սոցիալական աշխատանքի մեթոդների, մոդելների, ուղղությունների և տեխնոլոգիաների բովանդակության համալիր պատկերացում:
Կատարման չափանիշներ	1)Կամավորության, բարեգործության, եկեղեցու դերի ներկայացում սոցիալական աշխատանքի ձևավորման, կայացման գործում, 2)սոցիալական աշխատանքի տեսական հիմքերի ներկայացում, 3)սոցիալական աշխատանքի գործունեության մեթոդների, մոդելների, ուղղությունների, աշխատանքային ոլորտների ներկայացում:
Խնդիրների բնագավառ 2. Սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների ներկայացում, բացահայտում, համագործակցման աշխատանքների կազմակերպում	
Աշխատանքային գործընթացը	1)սոցիալական ծառայությունների անհրաժեշտությունն ու հնարավորությունները սոցիալական աշխատանքի զարգացման գործընթացում, 2)սոցիալական ոլորտի պետական և ոչ պետական համակարգերի, դրանց ենթակառուցվածքների գործունեության կազմակերպում:
Կատարման չափանիշներ	1)սոցիալական ծառայությունների կառուցվածքի, գործառույթների իրականացում, 2)սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ

	<p>պետական կազմակերպություններում սոցիալական աշխատանքի կազմակերպում</p> <p>3)սոցիալական աշխատողի տեղի և դերի իրազեկման հմտություններ</p>
<p>Խնդիրների բնագավառ 3. Հասարակության տարբեր շերտերի, խոցելի խմբերի, սոցիալական տարբեր պահանջմունքներ ունեցող անձանց բացահայտման, հաշվառման, նախնական խորհրդատվության, հանդիպումների կազմակերպման, տեղեկատվության փոխանցման և այլ բնույթի աշխատանքների կատարում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1)շահառուների, հաճախորդների հետ հանդիպումների կազմակերպում,</p> <p>2)տեղեկատվության ապահովում՝ սոցիալական ոլորտում շահառուներին ընձեռնվող հնարավորությունների վերաբերյալ իրազեկման աշխատանքների կատարում:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1)խորհրդառուի հետ հաղորդակցվելու կարողություններ, հարցազրույց վարելու հմտությունների ձեռք բերում,</p> <p>2)խորհրդառուի հետ հանդիպումների ընթացակարգի, գրանցման կարգի, կիրառվող ձևաթղթերի տեսակների, փաստաթղթային փաթեթի մշակման կարողությունների ձեռք բերում,</p> <p>3)մասնագիտական և աշխատանքային հարաբերությունների ապահովում:</p>
<p>Խնդիրների բնագավառ 4. Սոցիալական հիմնախնդիրների, խնդիրների բացահայտում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1)սոցիալական պատմության կազմում, խնդրահարույց իրավիճակի գնահատում /ախտորոշում/, օգնության, աջակցության, ապահովության պլանի կազմում,</p> <p>2) հիմնախնդրի համառոտ սահմանում, հիմնախնդիրը լուծելու համար համապատասխան քայլերի ներկայացում,</p> <p>3) խորհրդառուներին տարաբնույթ սոցիալական ծառայությունների մատուցման ներկայացում:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1)խորհրդառուի և նրա միջավայրի մասին տեղեկատվություն հավաքելու և դրա հիման վրա գնահատելու հմտություններ</p> <p>2)խոցելի խմբերի /երեխաներ, տարեցներ, հաշմանդամներ, շեղված վարքով անձիք, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդիկ և այլ շահառուներ/ պահանջմունքների ճանաչման կարողություններ</p>

	<p>3) հիմնախնդիրների, խնդիրների բացահայտման կարողություն</p> <p>4) հիմնախնդրի լուծման տարբերակների ընտրության և լուծման հմտություններ</p>
<p>խնդիրների բնագավառ 5. Դեպքի վարում՝ սոցիալական ծառայությունների մատուցման, կազմակերպական այլ աշխատանքների կատարման միջոցով</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1) խորհրդառուի օգնության գործընթացի կանոնակարգում, գործողությունների կամ միջամտության պլանավորում,</p> <p>2) աջակցության համակարգում և կազմակերպում,</p> <p>3) տունայցերի կազմակերպում և իրականացում,</p> <p>4) համագործակցություն համապատասխան մասնագետների հետ /հոգեբան, սոցիալական մանկավարժ, իրավաբան, բժիշկ և այլն/:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) դեպքի հետ աշխատելու առաջնային և հետագա խնդիրները ձևակերպելու ունակություններ,</p> <p>2) սոցիալական դեպքի վարման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման կարողություններ,</p> <p>3) սոցիալական աշխատանքի տարբեր փուլերում աշխատելու /խորհրդառուի հետ առաջնային շփման փուլ, պայմանագրի կնքման փուլ, խնդրի ձևակերպման փուլ/ կարողություններ:</p>
<p>խնդիրների բնագավառ 6. Սոցիալական աշխատանքում ընդունված էթիկական նորմերը</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1) սոցիալական աշխատանքի մասնագիտական էթիկայի հիմնական նպատակի ներկայացում,</p> <p>2) սոցիալական աշխատանքում ընդունված էթիկական սկզբունքների ու արժեքային դրույթների պահպանում,</p> <p>3) սոցիալական աշխատանքի էթիկական կոդեքսի և ստանդարտների ներկայացում:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) սոցիալական աշխատանք մասնագիտության արժեքային ասպեկտի հիմնավորում,</p> <p>2) սոցիալական աշխատողների միջազգային ընկերության կողմից ընդունված էթիկական կոդեքսի ներկայացում,</p> <p>3) սոցիալական աշխատանքում հանդիպող էթիկական երկընտրանքների ներկայացում:</p>
<p>խնդիրների բնագավառ 7. Սոցիալական սպասարկողի գործառույթներ՝ սոցիալական պաշտպանության, աջակցության և ապահովության բոլոր ոլորտներում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1) սոցիալական պաշտպանության բոլոր ոլորտների/ սոցիալական աջակցության, ապահովության, սպասարկման, աշխատանքի և</p>

	<p>զբաղվածության և այլն/անհրաժեշտ ընդհանուր մասնագիտական գիտելիքների ցուցաբերում,</p> <p>2) հիմնավորված բացատրական աշխատանքներ խորհրդառուների հետ, միջանձնային հարաբերությունների կառուցում,</p> <p>3) հարցազրույցների, զրույցների անցկացում</p> <p>4) տունայցերի նախապատրաստում, անցկացում, արդյունքների ամփոփում,</p> <p>5) սոցիալական դեպքի վարման հաշվետվությունների կազմում, արդյունքների գրանցում:</p>
Կատարման չափանիշներ	<p>1) պատշաճ մասնագիտական էթիկական վարքի ցուցաբերման կարողություններ</p> <p>2) տեղեկատվության մշակման, կոնֆլիկտների բացահայտման, հաղթահարման, իրավունքների պաշտպանության հմտություններ</p> <p>3) որոշումներ կայացնելու ունակություններ</p>
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Տվյալ տարածաշրջանում, տարբեր կազմակերպություններում այցելուների, հաճախորդների, խորհրդառուների, շահառուների բացահայտման, սպասարկման, սոցիալական ծառայությունների մատուցման հետ կապված ինքնուրույն աշխատանք, ինչպես նաև աշխատանք բարձր որակավորում ունեցող սոցիալական աշխատողի ղեկավարությամբ:</p>
IV. Լեզուները	Օտար լեզուներ
V. Համակարգիչը	<p>Համակարգչային օպերատորության հիմունքներ /տեքստերի տարրական ֆորմատավորում, աղյուսակների պատրաստում և խմբագրում, գրաֆիկական օբյեկտների խմբագրում և նկարագրում, փաստաթղթի տպագրում և ինտերնետում աշխատելու իմացություն/:</p>

<p>VI. Գիտելիքները</p>	<p>Սոցիալական աշխատանքը որպես գիտություն՝ համապատասխան տեսական գիտելիքների իմացություն</p> <p>Սոցիալական աշխատանքը որպես մասնագիտական գործունեություն՝ գործնական սկզբունքների, հիմնական մեթոդների, մոդելների, ուղղությունների մասին գիտելիքների իմացություն</p> <p>Սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կազմակերպություններում սոցիալական աշխատողի գործառույթների իմացություն</p> <p>Սոցիալական դեպքի վարման իմացություն</p> <p>Սոցիալական աշխատանքում ընդունված էթիկական նորմերի իմացություն</p> <p>Հաղորդակցության հմտությունների իմացություն</p> <p>Հոգեբանական գործընթացների, դրանց բնույթի, դրսևորման օրինաչափությունների իմացություն</p> <p>Սոցիալական աշխատանքի հետազոտական մեթոդների իմացություն</p> <p>Սոցիալական ոլորտի կազմակերպություններում կառավարման սկզբունքների, պլանավորման, կազմակերպման, բիզնես պլան կազմելու իմացություն:</p>
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Անհատի, խմբի, համայնքի հետ աշխատանքի հմտություններ</p> <p>Սոցիալական աշխատանքի մեթոդներով, ուղղություններով, տեխնոլոգիաներով աշխատելու հմտություններ:</p> <p>Համապատասխան փաստաթղթերի ճիշտ ընտրության կարողություններ:</p> <p>Սոցիալական դեպքի վարման կարողություններ</p> <p>Միջամտության պլանի ճիշտ կազմման կարողություններ</p> <p>Որոշումներ կայացնելու հմտություններ:</p> <p>Խորհրդառուի հետ աշխատանքի վերջնական արդյունքների գնահատման հմտություններ:</p>
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Մարդասեր, պատասխանատու, պարտաճանաչ, համբերատար, նվիրված աշխատանքին, շփման ու հաղորդակցման ունակություններ, իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու հմտություն:</p>